

Կիրակի

Ամպերը սեւ-սեւ սրտիս վրայ ցած
սիրտս երկնքի սեւով լճացած
մտքերս պարապ
շփոթ ու տագնապ
դուրսը ցուրտ ու սեւ եւ տեղատարափ

Որ կողմն ալ դառնամ
դեմս ես կ'ելլեմ
եւ զիս չեմ ճանչնար
եւ զիս կը փնտռեմ
դուրսը հրեշներ անյայտ ու անձեւ
սրտիս մէջ ամպեր սեւ-սեւ
ու անձրեւ

Կը խրիմ, կ'իյնամ

ցած

աւելի ցած

բազկաթոռիս մէջ
սեւ անդունդ դարձած

Կ'ընկղմիմ, կ'երթամ
շատուց խեղդամահ
գոյութեան հեղուկ ծալքին մէջ հիմա

Ո՞ր է իմաստը
եւ ո՞ր է փա՛ստը
ի զուր կը փնտռեմ փրկութեան լաստը
այս ալիքները սրտիս մէջ պարապ
չունին ուղղութիւն
եզերք
ոչ ալ ափ

Ամպերը սեւ-սեւ սրտիս ծանրացած
սիրտս լճացած
սիրտս փճացած

